

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պայմանագրեր 8 ՄԷՃ.
Չ Գաւառաց 10 ՄԷՃ.
Վեցամսեայ և Պայմանագրեր 4 ՄԷՃ.
Չ Գաւառաց 5 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Կանոնական տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կը լայ:



Լ Ր Ա Ք Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ 18 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մատրիտ 26 մայիս.
Քարտեանք Սարաիօսայէն Մատ-
րիտ եկող երկաթուղին արգելելով
կառաձգելու քննան և քանի մը կառ-
քեր խորտակելուն և այսպէս բազ-
մաթիւ ուղեւորաց մահուան պատ-
ճառ եղան:

Պէրիքատ 26 մայիս.
Կը հաւատարմութիւն Միլան իշխա-
նըն յունիս ամսոյն վերջը Եւրոպա պի-
տի ուղևորի:

Փարիզ 27 մայիս.
Պուշ-տիւ-Ռօն գաւառին ընդհ-
ժողովը լուծուեցաւ:

Հռոմ 26 մայիս.
Երեւակուտին յանձնաժողովը ամ-
բութեանց խնդրոյն վրայ վիճաբա-
նութիւնն ետ ձգեց:

Վիեննա 27 մայիս.
Պորսան թոյլ և գործերը չափա-
ւոր են Պէրլինի Պորսայէն եկած լուրե-
րուն պատճառաւ ֆոնտօններն իջան:
Մեր լրագիրներն Օմանեան
դանձուն նկատմամբ հասարակու-
թիւնը քաջալերել կը ջանան, և Օմ-
ֆոնտօններն իջեցնել ուղղորդուին մե-
քենայութիւնները կը պարտաւեն:

Փարիզ 28 մայիս.
Նոր նախարարք իրենց ընդունե-
լութեանց մէջ եօթնամեայ իշխանու-
թիւնը սահմանադրելու և ամեն ա-
պօրէն փորձերը զարկու հարկը ցուց-
նել կը ջանան:

Պ. Տը Պուրիօսն որ այս օրերս
նիւվրի գաւառէն երեւոյթան ընտ-
րուեցաւ, վերջին անցից վրայ Պո-
նաքարթեանց ըրած որոշմանը Զիւլ-
հըրսթ պիտի տանի:

Լոնտրոն 28 մայիս.
Անգղիոյ պանքան իր գրամա-
դեղն 3 1/2 իշուց:

Պէրլին 28 մայիս.
Կառավարութեան կուսակից թեր-
թերը կը հաստատեն թէ Պէլճիգա-
Եւրոպական տէրութեանց բաղձա-
նացը համեմատ պահպանել կուղէ
իւր անկախութիւնն ու չեղորու-
թիւնը, որ գաղաղութեանց վրայ
հիմնեալ է: Կուղէ որ Գերմանիայէն
վրէժ առնելու նպատակաւ Գաղղի-
ացոց կողմէ պատերազմ բացուե-
լու հաւանականութեան գէժ Պէլճի-
ոյ հողն ապահովի:

Վիեննա 28 մայիս.
Տեղւոյս Ապէնտ-Ռօսթ լրագիրը
Ռուսիոյ կայսեր Լոնտրոյի մէջ գե-
ղանաց ընդունելութեան առթիւ ը-
րած խօսքերուն վրայ Լոնտրոյի թոյ-
մը լրագիրն պատմութեան հակա-
ռակ կը ծանուցանէ թէ կայսրը ոչ
թէ ճառախօսութիւն ըրած է, այլ

դեռ պահանջ իւրաքանչիւրին զատ
զատ քանի մը խօսք ուղղած է: Օմ-
դեռ պահանջն ալ ըսեր թէ Ռուսիոյ և
Բ. Դրան մէջ խաղաղութիւնն ապա-
հովեալ է, և թէ ներկայ բարեկամա-
կան յարաբերութիւններն ամրապն-
դելու համար իր կողմէ հնար եղած
ջանքը պիտի ընէ: Ռուսի զաւթնե-
րով ալ անգղիացոց այլ և այլ նշա-
նաւոր անձանց հետ խօսակցած ժա-
մանակ խաղաղութիւնն ու գաղաղ-
ութիւններն անհրժեշտ պահելու մտք
խօսքեր ըսած է:

Փարիզ 28 մայիս.
Ներքին գործոց նախարար Պ.
Ֆուրթու- այս առաւօտ իւր ստորա-
կարգեալ պաշտօնատարներն ընդու-
նելու առթիւ՝ յայտարարեց թէ ա-
ռանց կուսակցական ոգւոյ՝ ընկե-
րական օրէնքները պաշտպանելու և
անգործութիւնն անվրդով պահելու
պիտի աշխատի, և ամեն ապօրինու-
թիւն անաշուապէս պիտի զրկուի:

Հռոմ 28 մայիս.
Պ. Մինկեթթիի կրած վերջին
պարտութեան վրայ՝ երեւոյթանա-
կան ժողովը լուծումը հաւանական
կը թուի:

Լոնտրոն 28 մայիս.
Օմ- Բօնո. 47 3/4
Իր- 4865 —
» 4869 55
» 4874 64 3/4
» 4872 82 3/4
Անգլ. Բօնո. 93 9/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Արտաքին գործոց նախարարու-
թեան նախորդ արարողագրտ Ալի
պէյ՝ Պետական խորհրդոյ անդամ ան-
ւանեցաւ:

Եգիպտոսի խօսքին Ա. Թարգման
Վսեմ. Աբրահամ պէյն հինգշաբթի
օրը մայրաքաղաքս վերադարձաւ Ե-
գիպտոսէն՝ Բահմանիէ շողեւանով:

Մայրաքաղաքիս Լէվընթ Հէրըլտ
Ջորադերը կրէ թէ Վսեմ. Նուպար
փաշային պաշտօնէ հրաժարելուն
պատճառն՝ օտար տէրութեանց ըրով
Եգիպտական իշխանութեան կողմէ
հիւպատոսի ձեռք առնուող քաղաք-
ականութեան դնելու խորհուրդն
եղած է, որ Բ. Դրան գեղեցութիւն
պատճառեր է:

Իսկ Լէվընթ Թայմիզ կրէ թէ՝ Վը-
սեմ. Նուպար փաշային համար ար-
դէն խօսք կար թէ Եւրոպա ուղևոր-
ութիւն մը պիտի ընէր գիւնանադի-
տական կամ անձնական հանգստու-
թեան նպատակաւ, բուն պատճառը
ճշգիւ յայտնի չէր. կըսուէր նաև
թէ անոր բացակայութեան միջոցին

արտաքին գործոց նախարարութիւ-
նը Բիադ փաշային պիտի յանձնը-
ւէր, ինչպէս որ յանձնուեցաւ:

Թունաց Վատրիարքարանի Սի-
նօղին և խառն ժողովին որոշմամբ՝
մեր Հայադէտ բարեկամ Զօրաքան
Տիմիթրիօս Էֆէնտին Կեդրոնական
ոստիկանութեան գործակատար ան-
ուանեցաւ:

Մայրաքաղաքիս քաղաքապետու-
թիւնը՝ հասարակաց առողջութիւնն
անվնաս պահելու նպատակաւ հրա-
ման հանց որ մայրաքաղաքիս մէջ
գտնուած անշէն և բաց գետններն՝
որք ամեն տեսակ աղտեղութեանց
ընդունարան եղած են և իրենց գար-
շահոտութեամբ օդը կապական են,
մինչև տաանհինգ օր պատուի կամ
տախտակորմով գոյցուին:

Եթէ գետնատէրերն այս պայմա-
նաժամուն մէջ չլինեն, այնուհետեւ
քաղաքապետութիւնն ինք պիտի շի-
նէ և ծախքն ալ տէրերէն պահանջէ:

Շիրքէթի խայրէի տնօրէն Հիւ-
սէյին Էֆէնտինն՝ պաշտօնէ ձգուե-
լուն պարագաներն հետեւեալ կերպով
կը պատմուին:

Յիշեալ ընկերութեան վարչական
խորհուրդը Հիւսէյին Էֆէնտին ըրած
ապօրինութեանց գէժ՝ բողոքոյ տե-
ղեկադիր մը կը ներկայացնէ առե-
ւորական գործոց նախարար Մահ-
մուտ փաշային: Նորին վսեմութիւնն
ալ ընկերութեան գլխաւոր բաժա-
նորդներն ի ժողով կը դաժմարէ անց-
եալ երկուշաբթի օրը: Բարձր. Մուս-
թաֆա Ֆազլ փաշան, Վսեմ. Բիշա-
փաշան, Ֆէրիտ փաշան և Բարձր.
Քեամիլ փաշային երեւոյթան Հա-
ֆիզ Էֆէնտին և ուրիշ նշանաւոր ան-
ձինք ներկայ կը գտնուին: Հիւսէյին
Էֆէնտինի գէժ ամբաստանութիւնն և-
ղած էր թէ վարչական խորհրդին ո-
րոշմանց հակառակ վարուելով, ըն-
կերութիւնն անյաջող վիճակի մէջ
ձգած էր: Մեծամեծ ծախքեր ըրած
էր, մինչդեռ կրնար խնայութիւն-
ներ ընել առանց գործին վնաս մը
բերելու, և այսպէս փոխանակ շա-
հու՝ վնաս և բաց գոյացեր էր ընկե-
րութեան հաշուեցոյցին մէջ:

Ժողովն այս ամբաստանութիւնն-
ըր ընենքով իրաւացի գտաւ և որո-
շեց:

1. Հիւսէյին Էֆէնտին պաշտօնէն
ձգել: 2. Ընկերութեան տնօրէն-
ըր կնքոյ տակ գնել 3. Ընկերութեան
տնօրէնութիւնն առեւտրական կեր-
պիւ Պաշ. Քեամիլ Վճիտ Էֆէնտի-
ն յանձնել, վարչական խորհրդին
հսկողութեան ներքին:

Կըսուի թէ Հիւսէյին Էֆէնտին
մեծ հարստութիւն ունի:

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճան ու-
ծակը խաղաղութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խաղաղի-
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մաաթի գրասեն-
եակը:
Համբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Պէրութի մաքսապետին վրայ ամ-
բաստանութիւններ ըլլալով, մաքսա-
տանց վերատեսչութիւնն յատուկ
պաշտօնատար մը Պէրութ զրկեց քըն-
նութիւն ընելու:

Մայրաքաղաքիս մէջ ժամանակ
ժամանակ չար գողտկութիւններ ը-
նող ինքնակոչ տատղարաշխ Հրեայ
մ'այս օրերս նորէն գողտկութիւն ը-
րեր է թէ յառաջիկայ մայիս 28 ին
գիշերը նմանը չտեսնուած գետնա-
շարժ մը պիտի ելնէ և Պայոյ մէջ, և
Գատըգեղ բոլորովին գետնին տակը
պիտի թաղուի:

Այս լուրը Գատըգեղի բնակչաց
տղէտ մասին մեծ երկիւղ պատճա-
ռելով, շատեր կը պատրաստուին ե-
ղեր ուրիշ տեղեր գաղթելու, որպէս
զի գողտկեալ գետնաշարժին ժա-
մանակ Գատըգեղ չգտնուին:

Հա թիւրքի լրագիրն Ռատիկա-
նութեան նախարարին ուշադրու-
թիւնը կը հրաւիրէ խաբեաց գու-
շակին վրայ, և կառավարիչ նեղ խը-
ցիկի մը մէջ առանձնացնել զայն քա-
նի մ'օր, որպէս զի գողտկութեան
արհեստին անպատեհութեանցը վրայ
քիչ մը խորհրդածէ:

Կարին հրատարակուած Խնկըրը
Շարդին լրագիրը կը ծանուցանէ թէ
Կարսի և Երզրումի քաղաքաց պաշտ-
պանութեան համար ձեռնարկուած
նոր ամբութեանց շինութիւնը՝ որ ձը-
մեռը դադարած էր, նորէն յառաջ
տարուիլ սկսեց է, և քանի մը հա-
րիւր գործաւոր կաշխատին:

Նոյն լրագիրը կը ծանուցանէ նաև
թէ յառաջիկայ հնձոց երևոյթը գո-
հացուցիչ է Կարսի գաւառին մէջ,
և թէ կուտակալը և Պայոն գետնացած
հրամաններուն համեմատ գաւառին
մէջ գտնուած բոլոր պատրաստ ցո-
րենը Եօղլատ և Կեսարիա զրկուի է:

Տիգրանակերտի գաւառին մէջ
վերջին օրերս պատահած գետնա-
շարժէն, Արդանա—Մատենի մօտ Ար-
բա—Մէյսան ըսուած տեղը՝ երկիւղ
պատուելով 60 տուն կործաներ և
100 տունի չափ ալ վնասուեր են: Բը-
նակիչները զարհուրելով չըմկալ լեռ-
ները փակեր են և վրաններու ներ-
քե կը բնակին:

Ռօտոսթօն կը գրեն թէ ամսոյս
6ին և 7ին օդը սաստիկ ցուրտ ը-
րեր է, և Ֆիլիպիլի ու Սօֆիայի կող-
մերն ալ ձիւն եկեր է:

Երէկ իրիկուն ժամ 3ին միջոցն-
ըր Եֆէնտին պաշին պողոտային վը-
րայ մեծ տունէ մը հրդեհ ելնելով,
նոյն տունն և 10 չափ Հայ տարա-
զավաճառաց խանութ այրեցան:

ԴՐՈՄԵՆՆԵՐ

Սատարգ վաշալի պաշտօնին արդեանց վրայ դեռ որոշ լուր մը չկայ։ Կրտսեր սակայն թէ Եւրոպայի սեղանաւորաց յանձն առած պայմանները բովանդակող պայմանագրին օրինակըն հինգշաբթի առաւր Կարնայի շտաբէն աւելի Կ. Պօլիս հասեր և նախաբարաց խորհրդին քննութեան յանձնուեր է։ Կրտսերի նաև թէ Աղգային Պանքա մը հաստատելու խորհուրդը մէկ կողմէ գրութեամբ Օսմանեան կայսրական Պանքային դրամագլուխն ու արտօնութիւններն ընդարձակելու խորհուրդը կայ եղեր, այն է՝ յիշեալ Պանքային գրամագլուխը 10 միլիոն լիբայի հանել, որով Եւրոպայի մեծ պանքաներուն երկրորդը կըլլայ Անգլիոյ Պանքայէն ետև և իր դործողութեանց սահմանը բնականաբար շատ կընդարձակի։

Աւսթրո-Օթոման Պանքային միացման խնդիրն ալ, որ լուծուած լըմիցած է կըսուէր, դեռ բանակցութեան ներքե է, բայց լուծուելու յոյս կայ կըսուի։

Հարիւրին 3 տոկոսով Օսմ. նոր քօնսօլիտէ մը հանելու խորհուրդն ալ այլ և այլ դիտողութեանց պատճառ տուած է Եւրոպական լրագրաց, և թուրքոյ գրամական վարկին օգտակար չեն համարիր շատեր։ Ուրովհետև աւելի յաղդողք և շարժուն վիճակ մ'ունեցող մանր քօնսօներու տեսակ մը կ'աւելցնէ։ Ուստի ներկայ Հարիւրին հինգով քօնսօլիտէն աւելի նախամեծար կը համարեն։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԷՍԱՍՏՐՈՒՄԻՍԻԷ			
17 յուլիս	ուրաթ իրիկուն	53.22	
18 »	շաբաթ առաւօտ		
	բացուեցաւ	54.5	
	կէս օր	54.7	
Կ. Պօլիս 17 մայիս			
Սօսիէթէ Ժէնէրալի բաժինը	Անգլ. լիբ.	6.35	
« ֆոխանակութեան »		4.24	
Կ. Պօլսոյ Պանքային »		4.26	
Քրէտի Ժէնէրալ »		9.18	
Քրէտի Օթոմո-թիւրք			
Երկաթուղեաց հիւսիս	Յր.	118.75	
» նոր		93	
Փոխ. 1863	»	342	
» 1865	»	343	
» 1869	»	284	
» 1872	»	83	
Փոխ. 1873			
Թրամուէյ	Օսմ. լիբ.	5.35	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Սրբազան Պատրիարքին կայսերական պալատն և Բ. Գրեան երթալու պաշտօնական հանդիսաւոր արարողութեան համար գեւա հրաւէր չըկայ, և յայտնի չէ թէ տակաւին ո՞րչափ պիտի ուշանայ։

Այս յայտադրման որ մինչև ցայսօր նմանն ունեցած չէ, առանց պատճառի չթուիր շատերու, և մեք ալ չենք ուղեր պայպիսի փափակ խնդրոյ մը խորը մանել և երկար բարակ հետադրօտութիւններ ընել։ Միայն կը ցուանք այն անխորհուրդ հրատարակութեանց վրայ, որք առանց յաջ և յաջեակ նայելու, առանց բնաւ իրենց խօսքերուն հատողութիւնը կըշուելու, Ս. Պատրիարքին անցեալ շաբթուան անձնական անակնկալ տկարութեան մը պատճառաւ։ Կայսերական պալատը չկրնալ երթալուն ուրիշ պատճառ տուին, մեծ վտանգ երեւակայս յեցին, և Պատրիարքը Բ. Գրան առջև ձախող դիւրքի մը մէջ դրին։

Այդ հրատարակութիւններէն մին՝ գլխաւորապէս՝ Սահմանադրութեան կանքողի ներքե ծածկուած դաւ մ'էր ներսէս Սրբազանի դէմ։ Բայց երանի թէ աղգին ալ հարուած մը չըլլար։

Կը լսենք թէ Գաղ. ժողովը նըկատողութեան առեր է վերջապէս փաւրիղի Մօւրապեան վարժարանի խնդիրը, և իր խնդրոյ կարգն անցուցեր է։

Մեզ կը թուի թէ Գաղ. ժողովը լու կընէ բանիւրուն անձերէ խառն յանձնաժողով մը կազմել, որ այս մեծ խնդիրը հիմեն քննէ, պէտք եղած անձանց և տեղեաց հետ բանակցի, և աղգին իրաւանց վերաբերեալ կէտերն սրտապէս ցոյց տուող սեղեկադիր մը չինելով Գաղ. ժողովոյ ներկայացնէ։

Կուտինայի (Քէօթահէա) դաւաւաւան ժողովը՝ Բաղլիչու և Խարբերգու նախկին առաջնորդ Գեր. Երեմիա եպիսկոպոսը կուտինայի առաջնորդ քնարած ըլլալով, խառն ժողովը վաւերացուց այն ընտրութիւնը։

Բնիկ Արապիկիւցի և այժմ Կարին բնակեալ Մեծ. Համբարձում Էֆէն-տի Չիլիկիւրեան պատուաւոր Հայ վաճառականը, որ այս օրերս Կ. Պօլիս կը գտնուի, Համբարձումն տօնին օրը Ս. Փրկչի Հիւանդանոցն այցելուութեան երթալով, 1000 դրը նուիրեց ի նպատակ խոցալի պատուարեւոյ հիւանդանոցին։

Գալաթիա Գուրչունը խանը Բընակեալ Մեծ. Տայիեան և Յրաճեան ընկերք՝ Գաղաթիոյ սովատանը աղգայնոց օգնութեան համար երկու Օսմանեան լիւրա դրած ըլլալով մեզ, իրենց այս մարդասիրական նուէրը Շամլեան Յովհաննէս աղային յանձնեցին։

... Տէր. Թաւաշի գրուած նամակէ մ'առնելով ձեր 1515 թիւ պատուական Մատիսին մէջ կը ծանուցանէք թէ. « Թաւաշի (վաւրի թաւ) Արշակունեան վարժարանի դաւաւաւ Անդրանիկ Այվազեանն իր աշակերտաց դաս տուած ատեն, քանի մ'անձինք նորա վերայ կը յարձակին, և մենք սուղ դնով վարժապետ չեմք ուղեր ըսելով կը գանակոծեն ևս »։

Տէր խմբագրապետ, այդ լուրն հիմնովին սուտ չէ, այլ սխալ լուծած և պատճառն ալ սխալ բացատրուած է. ուստի կը փութամ ուղղել այդ սխալն, և հինգ ամսէ ի վեր Թաւաշի Արշակունեան վարժարանին և իմ սնձիս դէմ նիւթուած դաւոց և նենգութեանց վերայ մի համառօտ գաղափար տալ ձեր ընթերցողոյ խնդրելով որ հաճիք ձեր պատուական լրագրացն մէկ անկիւնը գետեղել զայն։

Երկրորդ ատենէ ի վեր Արշակունեան վարժարանը խանդաբերու և զիս տատալելու ուխտեալ խմբակ խմբակ մի կայ հաս թաղարի մէջ, որ ամեն հնարաւոր միջոցներ մինչև իսկ զբարտաւթիւն ի դոք կը դնէ, որպէս զի իր աղգակործան նըպատակին համար Բայց շնորհիւ աղգակործան մինչև ասկէ հինգ ամիս առաջ այդ խմբակին դոյութիւնն իսկ կասկածի ներքե ինկած էր, և վարժարանն՝ հակառակ այն ամեն խոչընդոտներուն զոր ծածուկ եւ ուսումնաստեաց ձեռներ իւր դէմ կը յարուցանէին, կը շարունակէ իւր քաղաւածքն դէպ մ'ի յառաջագլխութիւն և անցեալ տարւոյն նոյեմբերի սկիզբներն իւր երրորդ քննութիւնն տալ յաջողեցաւ։

Այս այդ քննութիւնէն առջին նոյն ուխտեալ խմբակն զլուս վերցնել և երկու պատակութեան որոմներ ցանկելով աղգային գործոց մէջ մատ խառնել սկսաւ։ Ալ զխմբակ հարկ չէր մնացած, ուստի յայտնի կուտակցութիւն մի կազմելու և մեծագոյն մասն յինքն յանուցանելու համար ամեն տեսակ ձեղն ի դործ դըրաւ, և սոյն վարժարանն կործանելու նըպատակաւ մեծագոյն մասն վատարակելու յուսոյն օրջալի անհիմն լինելն փորձաւորութեամբ հասկցաւ։

Այս խմբակին պարագլուխը երկու տմիս շարունակ տունէն դուստրելով մեծ մեծ կը ջարդեն, վարժապետ կը համբեն

և աղգային վարժութեան դէկն իրենց ձեռքը կառնուն, բայց դեռ երեսն երեւով բան մ'ընել ու ասելու չեն համարձակիր։ Միայն պարագլուխն իրենց օրրանեակներէն երեք հոգի իւր տունն կոչելով, « Կիտին մէք ձեզ, Անդրանիկին դուռն տան թուրքաւորունց կիտի տըլարը աթըն ևսյն » կըսէ, և դանոնք իւր կրկն դործիք ընել կ'ուզէ. բայց անոնցմէ մին խիստ զեղեցիկ պատասխանով մի կըմերժէ նորա այս առաջարկն, ըսելով. « Ես վայրենի չեմ, այդպիսի բարբարոսական դործ կատարել քեզ և քո դաւակայ կը վայելէ »։ Այսպէս դործն կ'երկարի մինչև ի մարտ, վարժարանի վիճակն կը տարտաթի, հոգաբարձութիւն չը կազմուիր, դատերուն և ուսմանց փոփոխութեան մասին մեծամեծ դժուարութիւնք և դըժտութիւնք կը ծագին նոյն իսկ վարժապետաց մէջ, ի ցնծութիւն ուխտեալ խմբակին և ի ցաւ աղգասիրաց։

Վերջապէս ժողով կը դուստրի, ուխտեալ խմբակն իւր ամենէն ջերմ արարներէն քանի մ'անձինք ալ կ'առնու կը բերէ իւր հետ, որպէս զի ի պահանջել հարկին ունեայ իւր քով... Այդ ժողովոյ նպատակն էր վարժարանի հոգաբարձութիւն մի կազմել. բարձր նպատակ։ Այդ ժողովոյ ներկայ էին ես ալ, յանկարծ ինքիւն անձնականի կ'փոխուելու չուն խմբակին արքանեակներէն մին կարծես խեղաչեղելով, ինձ դէմ կը դառնայ և անարդ անօր « Այն միլիթ խղձութեամբ (չէ թէ պաշտօնէի պլ ստրկի նշանակութեամբ խմբակ պէտք է) օրտու դուռն հալոյն պիտի ետնընդոտ օրտուր տուողուն պագ, դալդ տըլարը ևսյն » կը դոյն. իսկ ես ամենէն կարեւորութիւն չտալով լուծութեամբ կը պատասխանեմ. Ասկէ քաջակերտելով ինտուենաւայ ծերունի մ'ալ կը ծայրակցի անոր և աւելի նախատական խօսքերով կ'սկսի թշնամանել զիս։ Կս դարձեալ ինքն իրեան « Այն, Աղա, դու սխալ հասկցեր ես, ես աղգին ոչ ստրուկն » ալ վարժապետն եմ և շատերն էֆէնտի կոչելով կը պատուեն զիս կըմեմ։ Ասոր վրայ խառնածոյն աղամուկ մի կը բրբի, երկու հոգի վերաս կը յարձակին, և զքանի որ դուռն մեր ամենէն խեղաչի ծերունից համար խեղքը չը հասնիր, սխալ կը հասկանայ կըսես, մենք ալ քեզ պէս վարժապետ չենք ուղեր, կորիւր դնաւ ևսյն ևսյն »։ Կը հրեն զիս և կը հրճուին, և եթէ մին հոն զիս չըսէր, սանդուղէն վար պիտի գլորէին կարծեմ։

Ամբոխն կըցրուի հետեւեալ օրն դարձեալ ժողով դուստրելու առաջարկութիւն կը լինի դպրոցասիրաց կողմանէ, բայց եկող չլինի զի ուխտեալ խմբակին նըպատակն վարժապետն նախատել և նորա սիրուն կոտորելով դպրոցը փակել էր։ Եւ իրենց խեղքով կարծեցին թէ իրենց նպատակին հասնաւ, բայց ես աղգասիրաց ուսմանց թախանձանքը հետեւեալ օրն վարժարանն կըբանամ վերստին, և մինչև ցարդ կը շարունակեմ ի հիմուկ ուխտեալ խմբակին պարագլուխը և անոնց խորհրդականին վարժապետն ուղղու և չուղղու կողմանք երկուքն ալ ստորագրութիւն հաւաքելու կը ձեռնարկեն, ուղղու կողմէն 90 հաս իսկ չուղղու կողմէն հազիւ 40 հաս ըստորագրութիւն կը հաւաքի։

Տէր խմբագրապետ, նշանաւոր է այս խմբակի պարագլուխներէն մէկուն ըսած հետեւեալ խօսքն. « Խմբուս ալ եթէ ուսմանք սովորի զիտեմ որ ինձ չպիտի հաւնի, ուստի աւելի աղէկ է որ իմն չսովորելով ինձ հնազանդ լինի և զիս պատուէ »։ Այս այս անցք անցին հինգ ամսոյ մէջ վարժարանի և նորին վարժապետի զլիւն։ Բայց տէր ես արդէն համոզուած եմ որ աղգին և ժողովոյ ետն ծառայութիւն մատուցանելու համար, սկստ է ի նախատուիլ ու հարածուիլ, և այս նախատախն իսկ բաւական վարձք են։ Ուստեալ խմբակին երբէք իր նպատակին չը պիտի հասնի, քանզի անխորտ է, քանզի աղգին մանկուոյն բարոյապէս մահուան դատարանին վճել կուզէ, քանզի ոչ եթէ արդարութեան ալ կրկն ծայրին կանոնայ։

Սակայն ցաւօք սրտի կը ծանուցանեմ որ, ես ոչ թէ այս կերպ նախատաւերու համար, այլ յառաջիկայ իսկ հրաժարելու ինքնին սրտաւն տուած և մօտեւ

ըստ զէպ ի Պօլիս ուղեւորել մտադիր լինելով, այն խեղճերն պիտի կարծեն թէ կտրեւորին կատարեցին։ Այն, ոչ, ընդ վայր թող չուրախանան, շնորհիւ աղգասիրաց, մանաւանդ հոգի ի Պօլիս դանդաւոր Թալաւցոյ ուրիշ աւելի ուսումնական վարժապետի մի ջանքը կրնայ Արշակունեան վարժարանն ևս աւելի յառաջագլուխել։ Այս բաւական է աղագայնի մէջ զիրենք դատաստարտելու։ Գիտեմ տէր, երկարեցաւ նամակս, այլ աղգային վարժարանի մ'անցիկ նկարագիրն լինելով հետաքրքրութեան և հետեւաբար հըրատարակութեան ալ արժանի է։

Հաճեցէք ընդ ունիլ յարգանքս
Զերդ
Ա. Բ. Բ. Բ. Ա. Բ. Բ. Բ.

... Խմբագրապետ Տէր. Պէշիքթի Մաքրուհեան երկու վարժարանի Հոգաբարձութեան նկատմամբ հրապարակ եղած թշնամական զրոյցներուն արժէքը հասկցուելու համար՝ կը խնդրեմ որ հետեւեալ պաշտօնական գրութեանց անկիւն մը շնորհէք ձեր պատուական լրագրին մէջ։

17 մայիս 1874 Միամ յարգանք
Պէշիքթի
Խ. Մ. Բ. Բ. Բ.

Պարզէն Արշակունեան Ուսումնական Խմբագրոյ. ՆԻՍՏ ԴՍ. 45 Ապրիլ 1874
Ըստ նախորդ որոշման՝ ուրաթ օր այցելութիւն տրուած ըլլալով Պէշիքթի Մաքրուհեան երկու վարժարանաց, այցելուք փախաղանք Թիւրքիա և Մարազաբեան էֆէնտիները ծանուցին թէ յիշեալ վարժարանաց թէ՛ նախալրթարանաց և թէ՛ ուսումնարանաց ուսմանց ընթացքը մանրամասն քննելով դոհացուցիչ դտած են իր սովորական ծախքին և յարատեւութեանը համեմատութեամբ. հետեւաբար վերջին օրերս ծագած տարածայնութիւնները անհիմն ըլլալը հաստատեցին։ Այցելուք յաւելին նաև թէ այս վիճակը ծանուցին աղջկանց վարժարանի կառավարիչ Զաքարիա էֆէնտիին, որ միանգամայն Թաղ. խորհրդոյ ատենադպիր ընէ, որպէս զի պատուարժան Թաղ. խորհրդոյն հաղորդէ։

Այս այցելութեան ներկայ էր Արմաշու վանահայր Գեր. Խորէն Սրբազան, որ այսօրուան նստին ևս ներկայ ըլլալով յայտարարեց թէ՛ « Երես չէ յոսաս որ Հայերէն լեզուն Պօլսոյ վարժարանաց, մանաւանդ աղջկանց վարժարանի մը մէջ այսչափ յառաջ գացած ըլլայ, և այդ տեսակով շատ ուրախ եղայ »։

Ուսումնական խորհուրդն որոշեց արձանագրել սոյն տողերն իւր տուեալին մէջ։

Վասն ճամբարտութեան ընդ բնագրին հաստատում. Գիւտնադպիր Ուսումնական (Կնիք Ուսումն. խորհրդոյ) Ե. Թալաւցոյ

Պարզէն Վայրուհեան Թաղ. Խմբագրոյ Պէշիքթի.

Մեծապատիւ Էֆէնտի. Զեր ապրիլ 21 թուականաւ գրութեան հետ Թաղ. խորհուրդս ընդունեցաւ նաև ձեր ներկայացուցած տասնէնչորս ամսուան (1873 փետր. 15-ն մինչ 1874 մարտ 31) Մաքրուհեան և վարժարանի Հոգաբարձութեան հաշուեմատեանը խորհուրդը յետ պարս ու պաշտած քննութեան դոհացուցիչ և ճիշդ դտած ձեր հաշիւները եւ կըփութայ իւր շնորհակալութեան հետ տալ ձեզ զայս վկայող իրը։

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Զաքարիա Գ. Խանճեան Բարեւոյ Հաղածեան (Կնիք Թաղ. խորհրդոյ)

ԸՈՒՆԻՏՐԵԿՆԵ

Մայրաքաղաքի հրապարակին մէջ առուստու բները ժամանակէ մ'ի

